Վարկային պայմանների հարցման մեթոդական դրույթներ

ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների կողմից տրամադրվող վարկերի պայմանների՝ ՀՀ կենտրոնական բանկի հարցումն իրականացվում է եռամսյակային պարբերականությամբ՝ ՀՀ առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների նախապես որոշված ընտրանքի համար: Հարցման մեթոդաբանությունը մշակվել է Եվրապական Կենտրոնական Բանկի կողմից իրականացվող համանման ուսումնասիրության հիման վրա (ECB Bank Lending Survey): Ընտրանքը կազմվում է այնպես, որ ապահովվի բանկերի և վարկային կազմակերպությունների վարկային պորտֆելի առնվազն 90% ծածկույթ:

Հարցման նպատակն է վարկերի տրամադրման ոչ տոկոսային պայմանների, վարկային ծախսերի, շուկայի սպասումների և վարվող քաղաքականության շարժառիթների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրումը՝ վարկային շուկայում առաջարկի և պահանջարկի որակական միտումների, դրանց վրա ազդող գործոնների, ինչպես նաև շուկայի մասնակիցների կողմից ձևավորված սպասումների և վարքագծի գնահատումը: Գնահատականների վերլուծությունը հնարավորություն է տալիս դատողություններ կատարել վարկային շուկայի վերաբերյալ՝ դրամավարկային քաղաքականության մշակման և ֆինանսական կայունության ապահովման համատեքստում, ինչպես նաև հասկանալ և մեկնաբանել շուկայում տեղի ունեցող երևութները և զարգացումները:

Հարցման ժամանակ հաշվի չի առնվում սեզոնայնությամբ պայմանավորված փոփոխությունները:

Առաջարկի վրա ազդեցություն թողած գործոնների ներգործությունը նկարագրելու համար օգտագործվել են հետևյալ նշանները՝

– 2 Զգալիորեն նպաստել է վարկավորման ընթացակարգերի խստացմանը
– 1 Մասնակիորեն նպաստել է վարկավորման ընթացակարգերի խստացմանը
0 Որևէ ազդեցություն չի ունեցել վարկավորման ընթացակարգերի փոփոխությունների վրա
1 Մասնակիորեն նպաստել է վարկավորման ընթացակարգերի դյուրացմանը
2 Զգալիորեն նպաստել է վարկավորման ընթացակարգերի դյուրացմանը:

Պահանջարկի վրա ազդեցություն թողած գործոնների ներգործությունը նկարագրելու համար օգտագործվել են հետևյալ նշանները՝

-2 Էականորեն նպաստել է պահանջարկի նվազեցմանը
- 1 Մասնակիորեն նպաստել է պահանջարկի նվազեցմանը
0 Որևէ ազդեցություն չի ունեցել պահանջարկի վրա

1 Մասնակիորեն նպաստել է պահանջարկի աճին

2 Էականորեն նպաստել է պահանջարկի աճին:

Ամփոփ տոկոսային ցուցանիշները հաշվարկելիս, ինչպես նաև ընդհանուր եզրակացություններ կատարելիս՝ անհատական հարցվողների դրական կամ բացասական պատասխանները դիտվում են որպես փորձագետների կարծիք ՀՀ վարկային շուկայի վերաբերյալ և ամփոփվում են առանց յուրաքանչյուր հարցվողի վարկային պորտֆելի տեսակարար կշիռը հաշվի առնելու:

Ցուցանիշների ամփոփման ժամանակ հաշվարկվում է դրական և բացասական պատասխաններ տվող հարցվողների քանակների տոկոսային հարաբերությունը ընդհանուր հարցվողների քանակի մեջ, իսկ զուտ տոկոսային հարաբերությունը հաշվարկվում է որպես դրական պատասխանների և բացասական պատասխանների տարբերության հարաբերակցությունն ընդհանուր պատասխանների մեջ:

Հարցման ամփոփ նյութում օգտագործվում են զուտ տոկոսային ցուցանիշներ, եթե այլ բան նշված չէ: